ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

12 ԱՊՐԻԼԻ 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Արմենուհի Ոսկանյանը, Արշակ Սրապյանը, Գրիգոր Կարապետյանը, Սերյոժա Սարդարյանը և Շուշանիկ Հակոբյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Էմմա Գասպարյանը և Պավլիկ Պապինյանը:

Արձանագրվեց, որ ներկա են ավագանու 13 անդամ և նիստն իրավազոր է:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառված 4-րդ՝ «2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» կետը հանել օրակարգից, քանի որ այն որպես նորմատիվ իրավական ակտ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ իրավական փորձաքննության ենթարկելու նպատակով, սակայն դեռևս նախարարության կողմից փորձագիտական եզրակացություն չի տրամադրվել:

Առաջարկվում է որոշման նախագիծը ներկայացնել ավագանու հաստատմանը հոջորդ նիստին՝ փորձագիտական եզրակացության առկայության դեպքում, իսկ օրակարգի 4-րդ հարցը լրացնել նոր բովանդակությամբ.
4. Համայնքայինի սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց մշտական օգտագործման տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

Իսկ օրակարգի 8-րդ կետով ներկայացված նախագծում կատարել փոփոխություն՝ համայնքի սեփականություն հանդիսացող աճուրդի ներկայացված հողամասերի լոտերի թիվը նախկին 2-ի փոխարեն սահմանել 8-ը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 ձայների համաձայնությամբ որոշման նախագիծը փոփոխվեց:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը՝ փոփոխված որոշման նախագծով:
Քվեարկությամբ, կողմ՝ 13 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 51-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.
Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի մայիսի 12-ի թիվ 08 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ա. Հովհաննիսյան

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 27.12.2022թ-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

4. Համայնքայինի սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց մշտական օգտագործման տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Մկրտիչ Արայիկի Դարչինյանին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի ավագանու որոշումների մեջ փոփոխություն կատարելու և ուժը կորցրած ճանաչելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Աննա Արթուրի Հարությունյանին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

10. Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Աննա Արթուրի Հարությունյանին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանության, քարտուղարության, անձնակազմի կառավարման և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ Ավագ Հովհաննիսյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանով /այսուհետ ՏԱՊ/ նախատեսվել է իրականացնել 8 ծրագիր, որոնք բխում են համայնքի զարգացման ծրագրից:

1. Վահագնի և Արջուտ բնակավայրերի փողոցների նորոգում ասֆալտապատման միջոցով:
2. Բազում բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի հիմնանորոգում որպես մշակույթի կենտրոն, Փամբակ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:
3. Լեռնապատ բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:
4. Մարգահովիտ, Լեռնապատ, Անտառամուտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:
5. Միկրոավտոբուսի ձեռք բերում:
6. Արջուտ բնակավայրում նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի արևմտյան մասնաշենքի վերանորոգման-արդիականացման աշխատանքներ:
7. Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության ստեղծում:
8. Փամբակի համայնքապետարանի շենքին կից՝ կցակառույցի կառուցում և համայնքապետարանի բակի նորոգում ու բարեկարգում:

Հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի 17.04.2023թ-ի ՎՏ/14.2/10764-2023 գրությունը և այն հանգամանքը, որ Փամբակ համայնքի ավագանին 21.04.2023թ-ի թիվ 48-Ա որոշմամբ, տվել է հավանություն ՀՀ ՏԿԵՆ-ի և ԳՄՀԸ-ի (GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար, անհրաժեշտ է համայնքի տարեկան աշխատանքային պլանում ավելացնել 9-րդ ծրագիր՝ «Դեբետ բնակավայրի խմելու ջրի ցանցի կառուցում»: Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել 27.02.2023թ-ի «Փամբակ համայնքի 2023թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» թիվ 18-Ա որոշումը և հաստատել նոր ՏԱՊ՝ ավելացված ծրագրերով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 52-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է համայնքի բյուջեի եկամտային մասում, որպես օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներն ավելացնել 7040700 դրամով, որից՝ 140700 դրամը որպես աշնանացան ցորենի փոխհատուցման վճար, իսկ 6900000 դրամը որպես «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի և համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճար: Բյուջեի եկամտային մասի «այլ դոտացիաներով» նախատեսված «ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022թ-ի պետական աջակցության» ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցման նպատակով հատկացվծ 19715130 դրամը տեղափոխել «օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված» այլ եկամուտներ:

Ծախսային մասում «Փողոցային լուսավորություն» նախահաշվում ավելացվում է 1000000 դրամ, Քարաբերդի վարչական շենքի նախագծման համար «շենքեր և շինություններ» նախահաշվի նախագծերով ավելացվում է 350000 դրամ: «Մշակույթի տան նորոգում»

նախահաշվում ավելացվում է 799000 դրամ՝ Անտառամուտ բնակավայրի այլընտրանքային նախադպրոցական հաստատության շենքի նորոգման համար, որը տրամադրվել է ՅՈՒՆԻՍԵՖԻ-ի կողմից: Ավելացված եկամտի և ծախսերի տարբերությունը ուղղվել է բյուջեի պահուստային ֆոնդ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 53-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Համայնքայինի սեփականություն հանդիսացող հողամասը անհատույց մշտական օգտագործման տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է համայնքային սեփականություն հանդիսացող Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0350-0135 կադաստրային ծածկագրով 10.00803 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ միսկանթուս (բազմամյա խոտ) աճեցնելու նպատակով, անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 54-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Մկրտիչ Արայիկի Դարչինյանին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Մկրտիչ Արայիկի Դարչինյանի դիմումը առաջարկվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող 06-041-0202-0139 կադաստրային ծածկագրով 0.1143 հա և 06-041-0202-0145 ծածկագրով 0.00426 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսքերը ջերմոցներ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների

հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 55-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու որոշումների մեջ փոփոխություն կատարելու և ուժը կորցրած ճանաչելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով ՀՀ Կադաստիր կոմիտեի Կ-28062022-06-0033 կասեցման որոշումը առաջարկվում է Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլ 2022 թվականի N 42-Ա որոշման 2-րդ կետի 6-րդ լոտում «19000 /տասինը հազար/» բառերը փոխարինել «30000 /երեսուն հազար/»-ով և և ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 27 փետրվարի 2023 թվականի N 22-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը և նույն որոշման 5-րդ կետը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 56-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Աննա Արթուրի Հարությունյանին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Աննա Արթուրի Հարությունյանի դիմումը առաջարկվում է սեփականության իրավունքով նրան պատկանող 06-070-0346-109 կադաստրային ծածկագրով 0.60229 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսքը ջերմոցներ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը: Ավագանու անդամ Սերյոժա Սարդարյանը չմասնակցեց քվեարկությանը, քանի որ հարցը վերաբերվում էր իր ընտանիքի անդամին:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 57-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է նախագծով ներկայացված աճուրդի նախկին 2 լոտին ավելացնել ևս 6 լոտ: Այսպիսով նախատեսվում է աճուրդ-վաճառքով օտարել հողատեսքեր 8 լոտով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 58-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023 թվականի մարտ ամսվա ընթացքում ձեռք է բերվել հիմնական միջոցներ՝ 560000 ՀՀ դրամի չափով՝ կից ցուցակին համապատասխան: Անհրաժեշտ է գույքի ցանկը ներառել համայնքի գույքագրման փաստաթղթերում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 59-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - Ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով սեփականության իրավունքով Աննա Արթուրի Հարությունյանին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Աննա Արթուրի Հարությունյանի դիմումը առաջարկվում է սեփականության իրավունքով նրան պատկանող 06-070-0244-0073 կադաստրային ծածկագրով 0.05215 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության վարելահողը ջերմոցներ՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու և սպասարկման նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը: Ավագանու անդամ Սերյոժա Սարդարյանը չմասնակցեց քվեարկությանը, քանի որ հարցը վերաբերվում էր իր ընտանիքի անդամին:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 60-Ա/:

10. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարը առաջարկեց Փամբակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանել 2023 թվականի հունիսի 12-ը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, ընդունվեց որոշում ***/կցվում է որոշում N 61-Ա/:***

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակվեց 2023 թվականի հունիսի 12-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ _____

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ